ՀԱՅ ՁԵՌԱԳՐԱՅԻՆ ՔԱՐԴԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ОРНАМЕНТЫ АРМЯНСКИХ РУКОПИСЕЙ

ORNAMENTS OF ARMENIAN MANUSCRIPTS

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

●

ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МАШТОЦА
МАТЕНАДАРАН
ГОСУДАРСТВЕННАЯ КАРТИННАЯ ГАЛЕРЕЯ АРМЕНИИ

●

MATENADARAN MASHTOTS RESERCA INSTITUTE
OF OLD MANUSCRIPTS
STATE PICTURE GALLERY OF ARMENIA

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1978

ИЗДАТЕЛЬСТВО „СОВЕТАКАН ГРОХ"
ЕРЕВАН 1978


PUBLISHING HOUSE „SOVETAKAN GROGH"
YEREVAN 1978

ՀԱՅ ՁԵՌԱԳՐԱՅԻՆ ԶԱՐԴԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ОРНАМЕНТЫ АРМЯНСКИХ РУКОПИСЕЙ

ORNAMENTS OF ARMENIAN MANUSCRIPTS

III
Ա 4443



Կազմող՝ Լ. Ա. ԴՈՒՐՆՈՎՈ
Առաջաբանը՝ Մ. Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Խմբագիր՝ Ա. Շ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Составитель — Л. А. Дурново
Вступительная статья — М. С. Саргсяна
Редактор — А. Ш. Мнацаканян

Compiled by — L. A. Durnovo
Introduction by M. S. Sargsian
Editor — A. Sh. Mnatsakanian

75 Ap 1
Հ 24

< 80102 (415) / 705 (01) 78 78 (S)

© «Սովետական գրող» հրատարակչություն, 1978

Հայ ձեռագրային վարդանկարչությունը երևան է եկել գրի ու գրականության ստեղծմանը զուգահեռ՝ աստիճանաբար ձևավորվելով անվանաթերթերի վրա, խորաններում, լուսանցքներում, տերունական և սյուժետային մանրանկարների մանրամասներում, վարդաշրջանակների վրա և վարգանալով դարձել հայ վարդարվեստի ինքնատիպ բնագավառներից մեկը:

Հատուկ աշխատություն՝ նվիրված հայ ձեռագրերի վարդանկարչությանը, մինչև հիմա գոյություն չունի: Սակայն հայ մանրանկարչության, վարդարվեստի և ձեռագրային մշակույթի վերաբերյալ անցյալում հրապարակված գրքերի, հոդվածների և ալբոմների հեղինակները անդրադարձել են նաև վարդանկարչությանը, փորձելով մեկնաբանել նրանց իմաստը և գնահատել արվեստը: Այս առումով հայ վարդանկարչության նկատմամբ եղած հետաքրքրությունն ունի ավելի քան 100 տարվա պատմություն: Դեռևս 1840—1850-ական թվականներին Մ. Բրոսսեն հրատարակել է Էջմիածնի պատկերապարդ գրչագրերի մի ցուցակ[1] և հետաքրքրություն շարժել հայկական ձեռագրերի գեղարվեստական ձևավորման նկատմամբ: 1870—1880-ական թվականներին ձեռագրերի վարդարանքի մասին գրել են հնագետ Ա. Ս. Ուվարովը[2], Վ. Վ. Ստասովը[3] և ուրիշներ: Բարձր գնահատելով հայկական վարդարվեստի ինքնատիպությունը, Վ. Ստասովը իր «Սլավոնական և արևելյան վարդարվեստը» մեծածավալ ու շքեղ ալբոմում վետեղել է հայ վարդանկարչության ավելի քան 100 նմուշ պարունակող 8 առանձին գունավոր տախտակ: Դրանք Վենետիկի Մխիթարյանների գրադարանում, Փարիզի, Բեռլինի, Պետերբուրգի, Մոսկվայի թանգարաններում և առանձին անձանց հավաքածուներում պահպանված շուրջ 12 հայերեն պատկերապարդ ձեռագրերից առնված վարդանկարներ են: Նա գրում է. «Ձեռագրերի գլխապարդերում և լուսանցքների վարդանկարներում հայ նկարիչները ինչպես ձևերի, այնպես էլ գույների գծով հանդես են գալիս իբրև անսպառ երևակայությամբ, անսահման հնարավորությամբ և նուրբ ճաշակով օժտված ստեղծագործողներ»:

Հետագայում հայ և օտարազգի մի շարք արվեստաբաններ, այդ թվում Գ. Հովսեփյանը, Յ. Ստրժիգովսկին, Ֆ. Մակլերը, Ա. Սվիրինը և ուրիշներ, անդրադարձել են հայկական ձեռագրերի ու ճարտարապետական հուշարձանների ձևավորման խնդիրներին, դրանց վարդարվեստը դիտելով որպես համաշխարհային վարդարվեստի ուշագրավ ճյուղերից մեկը:

Հայ վարդարվեստի հիմնական մոտիվների ծագման ու գաղափարական բովանդակության բացահայտման հարցերով զբաղվել է Ա. Մնացականյանը: Հարուստ նյութի մանրազնին ուսումնասիրությամբ նա հաստատում է, որ հայ վարդանկարչության բոլոր հիմնական մոտիվների հիմքում ընկած են նյութական կոնկրետ սկզբնապատճառներ՝ բնության և հասարակական ուժերը: Նրանք սկզբնապես ունեցել են կոնկրետ իմաստ և գործնական նշանակություն, սակայն ժամանակի ընթացքում աստիճանաբար մշակվելով, հեռացել են իրենց նյութական հիմքից և նախնական տեսքից, ստեղծելով նոր ու բավմապան վարդաձևեր[4]:

Հայ վարդանկարչության մեծաքանակ նմուշներ, մասնակի մեկնաբանություններով, տեղ են գտել Լ. Ա. Դուռնովոյի «Հին հայկական նկարչության համառոտ պատ-

[1] **Brosset M.**, Catalogue de la Bibliothèque d'Etchmiadzin, St. Pétersbourg, 1840. Նույն հեղինակի —Rapport sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie, exécuté en 1847—1848, St. Pétersbourg, 1851.

[2] **Уваров А. С.**, Эчмиадзинская библиотека, см. «Пятый археологический съезд в Тифлисе», М., 1879.

[3] **Стасов В. В.**, Армянские рукописи и их орнаментация, см. «Журнал Народное просвещение», 1885. Того же автора; «Славянский и Восточный орнамент по рукописям древнего и нового времени, Атлас, СПб, 1887.

[4] **Մնացականյան Ա. Ս.**, Հայկական վարդարվեստ, Երևան, 1955: Նույնի համառոտագրությունը ռուսերեն (ավտոռեֆերատ)՝ «Армянское орнаментальное искусство», Թբիլիսի, 1963:

մություն» աշխատության մեջ[5], նրա կազմած «Հին հայկական մանրանկարչություն» մեծածավալ ալբոմում[6], նրա վերահրատարակություններում[7], 1966 թ. Վենետիկում հրատարակված «Հայկական մանրանկարչություն» ալբոմի առաջաբանում[8], Ս. Տեր-Ներսեսյանի աշխատություններում[9], ինչպես նաև հայ մանրանկարչության տարբեր դպրոցներին վերաբերող առանձին աշխատությունների մեջ ու հոդվածներում[10]:

Ներկա ալբոմն առաջին փորձն է՝ առանձին հատորով ներկայացնելու հայ վարդանկարչության ընտիր նմուշները, քաղված Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող միջնադարյան ձեռագրերից: Սույն աշխատանքը սկսվել է դեռևս 1946 թվականից: Այն ծրագրել, ղեկավարել ու մի խումբ նկարիչ-մասնագետների ուժերով իրականացրել է հայ մանրանկարչության բնագավառի մեծ երախտավոր, արվեստի վաստակավոր գործիչ Լիդիա Ալեքսանդրովնա Դուռնովոն (1885—1963): Սակայն մահը խանգարեց, որպեսզի նա իր կազմած ալբոմը հրատարակեր ներածականով, լրացումներով ու ծանոթագրություններով:

Խմբագրական աշխատանքի ժամանակ պարզվեց, որ կազմողը ալբոմի համար նախատեսած է եղել 83 տախտակ, որոնցից 2-ը, սակայն, ցածրորակ ընդօրինակության պատճառով դուրս թողնվեցին ալբոմից: Միաժամանակ նպատակահարմար գտնվեց Հայաստանի պետական պատկերասրահի արխիվից ընտրել ևս 15 տախտակ, որոնք ժամանակին արտանկարվել են Լ. Ա. Դուռնովոյի ղեկավարությամբ՝ նույն պատճենահանող մասնագետների կողմից: Բացի դրանից, ալբոմը լրացվեց ևս 4 նոր տախտակներով (տախտ. 28, 45, 46, 51), որոնք կազմվեցին ներկա հրատարակությունն իրականացնողների ընտրությամբ:

Այսպիսով, ալբոմն այժմ ունի 100 գունավոր տախտակ, որոնք պարունակում են ավելի քան 2000 վարդանկար: Այդ տախտակներն ալբոմում դասավորված են համապատասխան ձեռագրերի ժամանակագրական հաջորդականությամբ:

Ներկայացվող նյութերը, անշուշտ, չեն սպառում հայ ժողովրդի տաղանդավոր վարպետների կողմից դարերի ընթացքում ստեղծված ձեռագրային վարդարվեստի լավագույն նմուշները: Դրանք ներկայացնում են միայն առավել կարևոր, տիպական և հաճախ օգտագործվող ապագային վարդանկարների բնորոշ օրինակներ:

* * *

Ինչպես հայտնի է, հայկական վարդարվեստի հիմնական մոտիվների ծագումն ու ձևավորումը կապված են հեռավոր ժամանակների հետ: Այստեղ էլ իշխում են կենդանական, երկրաչափական, բուսական, ինչպես նաև օժանդակ մոտիվները (երկնային մարմիններ, ճարտարապետական կառույցներ և այլն), որոնք կազմում են նաև մյուս ժողովուրդների, հատկապես հին արևելյան ժողովուրդների վարդարվեստային մշակույթի տարերքը:

Քրիստոնեությունը, որը սկզբում պայքարում էր հեթանոսական ժամանակների ըմբռնումների և նրանց հետ առնչվող մշակութային ժառանգության դեմ, հետագայում աստիճանաբար, թե՛ ուրիշ երկրներում և թե՛ Հայաստանում, տեղի տվեց և սկսեց օգտվել նաև հին վարդարվեստից: Դրա շնորհիվ եկեղեցական կառույցները, սրբական անոթները, վարագույրները, հոգևորականների սկզեստները, գավազանները և այլ առարկաներ, ինչպես նաև ձեռագրերը, հատկապես Ավետարանը, Աստվածաշունչը, Ճաշոցը, Մաշտոցը, Ճառընտիրը, Պատարագամատույցը սկսեցին վարդարվել հնագույն վարդաձևերով և նրանց վերամշակված նորանոր տարատեսակներով:

Այստեղ մեծ դեր հատկացվեց գույներին, նրանց նրբերանգներին, իսկ աշխատանքն իրագործվեց գրչով և վրձնով, ուստի վարդաձևերն առավել բավմսական ու գրավիչ տեսք ստացան՝ ձևավորելով հայկական վարդարվեստի մի նոր բնագավառ, որը և կոչում ենք ձեռագրային վարդանկարչություն:

Հայ վարդանկարչությունը, միջնադարյան արվեստի մյուս ճյուղերի նման ապրելով վարգացման տարբեր փուլեր, հանդես է եկել նկարչական տարբեր դպրոցների ոճական առանձնահատկություններով:

Դժբախտաբար մեզ չեն հասել V—IX դարերի վարդանկարչական ստեղծագործությունները, իսկ պահպանված առանձին վկայությունները հիմք չեն տալիս ամբողջական գաղափար կազմելու այդ ժամանակաշրջանի վարդարվեստի մասին: Սակայն 10-րդ դարից պահպանված մանրանկարչության բարձր մակարդակը և գրավոր աղբյուրներում եղած վկայությունները խոսում են այն մասին, որ նախորդ դարերում արդեն մշակվել էին հայ ձեռագրերի գեղարվեստական ձևավորման ու նկարազարդման որոշակի ավանդներ:

Այս առումով հատկանշական են X դարի 3 ձեռագրերից քաղված շուրջ 80 վարդանկարները (տախտ. 1—6): Դրանք, պահպանելով վարդամոտիվների և հորինվածքի ընդհանրությունը Մերձավոր Արևելքի դեկորատիվ արվեստի հետ, միաժամանակ, աչքի են ընկնում իրենց ինքնատիպությամբ:

Այս ժամանակաշրջանում, արաբական բռնատիրության լծից հայ ժողովրդի ազատագրվելու և սեփական պետականությունը վերականգնելու շնորհիվ, երկրում նպաստավոր պայմաններ ստեղծվեցին մշակութային առաջըն-

---

[5] **Дурново Л. А.**, Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957.

[6] **«Հին հայկական մանրանկարչություն»**, ալբոմ, առաջաբանը (հայերեն, ռուսերեն)՝ **Լ. Ա. Դուռնովոյի**, Երևան, 1952:

[7] «Miniature Arménienne", Texte et note de L. A. Dournovo, preface de S. Der-Nersessian, Paris, 1961. **«Հայկական մանրանկարչություն»** ալբոմ, առաջաբանը (հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն)՝ **Լ. Ա. Դուռնովոյի**, Երևան, 1967:

[8] **«Հայկական մանրանկարչություն»**, ալբոմ, առաջաբանը՝ **Հ. Ս. Ճանաշյանի**, Վենետիկ, 1966:

[9] **Ս. Տեր-Ներսեսյան**, Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975: S, Der Nersessian, „L' Art Armenien", Paris, 1977.

[10] **Լ. Ալպոյան**, Կիլիկյան մանրանկարչությունը 12—13-րդ դարերում, Երևան, 1964 թ., **Ա. Ավետիսյան**, Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը, Երևան, 1971: **Տ. Իվայլովա**, 1018 թվականի հայկական նկարազարդ քառավետարանը, տես՝ **«Հայկական արվեստ»** ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտ, ժողվածու, հատ. I, Երևան, 1974, էջ 74—81: **Հ. Հակոբյան**, Վասպուրականի մանրանկարչությունը, գիրք Ա, Երևան, 1976: **И. Дрампян, Э. Корхмазян**, Художественные сокровища Матенадарана, М.. 1976:

թացի համար: Նոր պայմաններում ծնունդ առած գրչական հուշարձաններից բացառիկ գեղարվեստական արժեք է ներկայացնում առանձնապես 989 թ. ձեռագիրը՝ Էջմիածնի Ավետարանը, իր վարդանկարներով (տախտ. 3—4), որոնք մինչև այսօր էլ աչքի են ընկնում իրենց չխունացող գույների պայծառությամբ: Դրանք պատկերում են խորաններ՝ սյուներով, կամարներով, խոյակներով, խարիսխներով, ծառեր, ծաղիկներ, թռչուններ (աղավնի, սիրամարգ, կաքավ, լոր), մրգերով զամբյուղ, նռնենու ճյուղեր, վարագույր, բարձի երես և այլ մանրամասներ: Ուշագրավ են նաև տերունական մանրանկարների համար օգտագործված շրջանակների վարդաձևերը: Այդ բոլորի մեջ տաղանդավոր հայ մանրանկարիչը վարպետորեն վերարտադրել է իրերի նմանությունը, նույնիսկ նրանց առարկայական հատկությունը. ինչպես օրինակ, մարմարյա սյուները, հոնիական խոյակները և մոնումենտալ շենքերի շքամուտքերի կամարների նման եցված ծիածանային կամարը: Առանձնապես կենդանի ու համոզիչ են պատկերված թռչունները և բուսականությունը: Արվեստագետի վարպետությունը, նրա նուրբ ճաշակը դրսևորվել է հատկապես երանգավորման մեջ: Հարուստ գունաշարը, լուսավոր և տաք գույների (ուժեղ կարմրի, դարչնագույնի, կանաչի և կապույտի) նրբերանգների համադրությունը՝ չափավոր կիրառված ոսկեգույնի հետ ստեղծում են կենսուրախ տրամադրություն, և տերունական մանրանկարերի հետ ամբողջ ձեռագրին տալիս են հանդիսավորություն, տոնական տեսք և շքեղություն: Գեղեցիկ և կենսաբույր այդ ստեղծագործություններում նկարիչը հասել է գեղարվեստական խոր համոզչականության:

X դարի վերջերին՝ Անիի Բագրատունյաց թագավորության շրջանում, ստեղծված այս բարձրարվեստ և մոնումենտալ կարդանկարները համահնչյուն են ժամանակի ծաղկող մշակույթին և Գրիգոր Նարեկացու պոեզիայի ոգուն: Նրանք միաժամանակ վկայում են ավելի վաղ շրջանի պատկանող տեղական, ազգային, ինչպես նաև հելլենիստական ժամանակներից եկող ավանդների կենսականության մասին: Իրենց ինքնատիպությամբ և ազգային բնույթով 989 թ. կարդանկարները նշանակալից տեղ ունեն ոչ միայն հայ, այլև համաշխարհային արվեստի գանձարանում:

Ալբոմի մեջ լայնորեն ցուցադրվում են XI դարից պահպանված կարդանկարները (տախտ. 7—27): Այս շրջանի ազգային մշակույթի տարբեր օջախներում ստեղծված ձեռագրային կարդարվեստի մեջ, ինչպես և սյուժետային մանրանկարներում, որոշակիորեն դրսևորվել են ձևավորման գրաֆիկական և գունանկարչական եղանակները: 1018, 1038 և 1057 թթ. ձեռագրերի կարդանկարների եզրագծերի որոշակի ընդգծումը, հարթապատկերայնությունը, ներկերի սահմանափակ կիրառումը, ճարտարապետական բնանկարի ու ոսկեգույնի բացակայությունը և ձևերի լայն ընդհանրացումները կազմում են այս խմբի կարդարվեստի հիմնական հատկանիշը: 1018 թ. ձեռագրի նկարիչը լայն ընդհանրացումներով է պատկերել խաղողի և արմավենու տերևները, նշաձև վարդյակները, իրար վրա դրված և եզրագծերը ընդգծված տարբեր գույնի սալիկներով կազմված խարիսխները, հրաժարվելով նախորդ դարերում կիրառված ճարտարապետական մանրամասների վերարտադրումից (տախտ. 11—12): Առանձին հետաքրքրություն են ներկայացնում սև հենքի վրա սպիտակ, կանաչ, կարմիր և դեղին մաքուր գույներով նշված շղթայաձև բարդ հյուսվածքները: Չափազանց սեղմ ու վուսպ գծանկարը, որին ենթարկված են գույները, այս, ինչպես և 1038 և 1057 թթ. ձեռագրերում բովանդակությունը բացահայտելու դեր է կատարում: Մոնումենտալ ոճի այս կարդանկարներն ունեն ինքնատիպ կոլորիտ, որով ևս տարբերվում են մյուսներից:

XI դարի գունանկարչական վարդաձևերի բնորոշ օրինակներից են №№ 7736 («Մուղնու Ավետարան»), 2805, 7737 և 2877 ձեռագրերի կարդանկարները (տախտ. 11—26): № 7736 ձեռագրի մասին Լ. Ա. Դուռնովոն գրել է. «Մուղնու Ավետարանի նկարչությունը, իր կերպավորմամբ, գունեղության ճոխությամբ ու հագեցվածությամբ, գեղարվեստական բարձր նվաճումների հուշարձան է»[11]:

Իսկապես, այստեղ (տախտ. 18—21) մեծ նրբության է հասցված գծանկարը, կարդանկարչական մոտիվների մանրամասների մշակումը և գույների հագեցվածությունը: Խոշոր՝ ամբողջ էջը զբաղեցնող, ծանրակշիռ, քառանկյունի խորանները, ինչպես նաև նորամույծ գլխակարդերը, կարդագրերն իրենց բուսական, կենդանական և երկրաչափական բազմաթիվ մոտիվներով, ձեռագրին տալիս են շքեղություն և գունագեղ տեսք: Թանձր ներկերով կերտված մոնումենտալ ոճի այդ ստեղծագործությունները մոտենում են որմնանկարչությանը: Օժտված դեկորատիվ-գեղարվեստական մեծ զգացումով, շնորհաշատ հայ նկարիչը ստեղծել է բազմօրինակ կարդաձևերի կուռ կոմպոզիցիաներ և տեղադրել է դրանք առանձին էջերի վրա կամ լուսանցքներում այնպիսի հաշվենկատությամբ, որ բնավ չեն խախտում ամբողջ էջի ձևավորման հավասարակշռությունը:

Զարդարանքի հարստությամբ, ստեղծագործական մեծ երևակայությամբ, բովանդակալից կարդամոտիվների գունանկարչական հստակ լուծումներով և մոնումենտալությամբ կերտված Մուղնու Ավետարանի կարդանկարները յուրովի առնչվում են Մլքե թագուհու 902 թ. և Էջմիածնի 989 թ. ձեռագրերի կարդարվեստի հետ:

XII—XIII դարերի բուն Հայաստանի և գաղթօջախների հայ կարդանկարչությունը ներկայացվում է №№ 27—45-րդ տախտակներում: Դրանք պարունակում են տարբեր վայրերում ստեղծված ավելի քան 500 կարդանմուշներ: Իրենց ինքնատիպությամբ և ոճական առանձնահատկություններով առանձնապես աչքի են ընկնում նկարիչներ Ստեփանոսի (տախտ. 29—32), Կոզմայի (տախտ. 33—35), 1224 թ. ձեռագրի անանուն նկարչի (տախտ. 36—37), Թորոսի (տախտ. 38), Իգնատիոսի (տախտ. 39—40), Գրիգորի (տախտ. 41—44) կարդանկարները: Հայկական ձեռագրային կարդանկարչությունը բարձր կարգացման է հասնում Կիլիկյան Հայաստանում XII—XIII դարերում:

Անիի Բագրատունյաց թագավորության անկումից (1045) հետո, թուրք-սելջուկների, այնուհետև մոնղոլական արշավանքների ու նրանց երկարատև տիրապետության

[11] Дурново Л. А., Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957 г., стр. 23.

շրջանում, հայ ժողովրդի մի մեծ կանգված տեղափոխվում է Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան երկրամասը՝ Կիլիկիա, ուր մշտական բնակություն հաստատելով, ստեղծում է Կիլիկյան հայկական թագավորությունը, որը գոյատևում է շուրջ 200 տարի (1198—1375):

Ընորհիվ տնտեսական-քաղաքական կյանքի նպաստավոր պայմանների, տարանցիկ առևտրի ու միջպետական յայն կապերի, այստեղ արագորեն բարգավաճում է հայ ազգային մշակույթը, մասնավորապես մանրանկարչությունը և նրա մեջ բացառիկ տեղ գրավող կարդարվեստը: Կիլիկիայում ձեռագրերի գեղարվեստական ձևավորման ու նկարազարդման գործն սկզբնական շրջանում կրում է բուն Հայաստանի որոշակի կնիքը: 12-րդ դարի երկրորդ կեսից արդեն ձևավորվում են նոր պայմաններին ու ժողովրդի գեղարվեստական պահանջներին համապատասխան կիլիկյան մանրանկարչական դպրոցի ոճական առանձնահատկությունները: Ձեռագիր գրքերի չափերը փոքրանում են, դրա հետ մանրանում և ավելի նրբակերտ են դառնում կարդանկարներն ու նրանց մանրամասների մշակումը: Բուն Հայաստանի կարդանկարչությանը բնորոշ մոնումենտալ ոճը կորցնում է իր նշանակությունը: Այստեղ առաջնություն է տրվում գրքի դեկորատիվ ձևավորմանը. կատարելագործվում է կիսախորանի, լուսանցապարդի, կարդագրերի և մյուս կարդաձևերի ներդաշնակությունը՝ անվանաթերթերի ձևավորման մեջ: Եթե մինչև այդ բուն Հայաստանում կարդանկարները կիրառվում էին գլխավորապես սկզբնաէջերի ձևավորման ժամանակ կամ տերունական մանրանկարների շրջանակներում, ապա այստեղ՝ Կիլիկիայում, առատորեն պատկերավարդվում են նաև ձեռագրերի մյուս էջերը: Գույները դառնում են ավելի լուսավոր, պայծառ և հնչեղ, լայնորեն կիրառվում է ոսկին: Մանրանկարչության մեջ, ինչպես և կարդարվեստում ուժեղանում է իրական կյանքի պատկերման ձգտումը: Կրոնական-ավետարանական սյուժեները և խորհրդանշաններն սկսում են աշխարհիկ տեսք ստանալ: Հարևան և հեռավոր երկրների մշակույթների հետ ունեցած ստեղծագործական լայն շփումների հետևանքով կարդարվեստի մեջ մուտք են գործում նաև նոր կարդաձևեր:

Ձարդանկարչության այս նոր նշանները, որոնք երևան են գալիս 1173 թ. նկարազարդված Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկում, ապա 1194, 1237 և 1249 թթ. ձեռագրերի ձևավորման մեջ, լիովին դրսևորվում են նաև «ի լաւ և ընտիր օրինակէ» ընդօրինակված 1251 թ. ձեռագրում (տախտ. 47): Նկարիչ Վարդանի՝ ոսկերչի մանրակրկիտությամբ և ոսկու առատ օգտագործումով նկարած հարթապատկերային խորաններում, թռչունների ֆիգուրների մանրամասների ճշգրիտ վերարտադրման մեջ, բուսական մոտիվների կոմպոզիցիաների պարզության, նրանց ներդաշնակ դասավորության և նկարման կատարյալ տեխնիկայում արդեն արտահայտվում է կարդարվեստի նոր ոճը:

Կիլիկյան մանրանկարչական դպրոցի բարձր տեխնիկան ու նրա հարուստ կարդարվեստն առավել ցայտուն արտահայտվել են XIII դարի կեսերին Սմբատ Սպարապետի պատվերով ստեղծված փոքրածավալ (23×15,5) ձեռագրի կարդանկարներում (տախտ. 48—50):

Քառանկյունի, եռասյուն,, թեթև, ոսկեզօծ խորանները որոնք նոր որակ են կապմում առաջնաթերթերի ձևավորման մեջ և կարդամոտիվների բազմազանությամբ (հավերժահարսեր, վայրի գազաններ, երևակայական էակներ, ձիեր և այլն), սյուների շուրջ համաչափ տեղադրված ծառերի ու թռչունների նկարները, ինչպես նաև կարդագրերը և շրջանակների կարդամոտիվները տարբերվում են նախորդ շրջանի կարդանկարներից՝ երանգապնակի մեծ թարմությամբ և պայծառությամբ:

1260—70-ական թվականներին Կիլիկիայում հանդես են գալիս մի շարք նոր և մեծատաղանդ մանրանկարիչներ, որոնք հայկական ձեռագրային կարդարվեստը բարձրացնում են մի նոր, ավելի բարձր մակարդակի:

Այս շրջանի մեծագույն և լայնորեն ճանաչված արվեստագետը եղել է Թորոս Ռոսլինը: Նա ձևավորել ու նկարազարդել է բազմաթիվ ձեռագրեր, որոնցից, սակայն, մեզ հայտնի է 7-ը՝ ստեղծված 1256—1268 թվականներին: Մաշտոցյան Մատենադարանն այդ հանճարեղ մանրանկարչից ունի երկու ձեռագիր, որոնցից մեկի՝ № 10675 ձեռագրի (1268 թ.)[12] կարդանկարների որոշ նմուշներ կետեղված են սույն ալբոմում (տախտ. 51): Դրանք բուսական, կենդանական, երկրաչափական մոտիվներից, մարդկային և երևակայական էակների ֆիգուրներից կազմված բարդ կոմպոզիցիաներ են, որոնք կարդարում են գլխավորապես խորաններն ու անվանաթերթերը: Այստեղ Թորոս Ռոսլինը հանդես է գալիս որպես կոմպոզիցիայի մեծ վարպետ: Հմտորեն տեղադրելով մտահղացված կարդանախշը, ներդաշնակ ու հավասարակշռված կազմակերպելով էջը, նկարիչը իր կոմպոզիցիաները հագեցրել է իրական կյանքի խոր զգացողությամբ: Ձարդանկարչության մեջ երևան եկած այդ երևույթը, ինքնին, ցուցանիշ է այն նոր գաղափարախոսության, որով համակված էր նյութապես և մտավոր կարգացում ապրող կիլիկյան ժողովուրդը՝ 13-րդ դարի երկրորդ կեսում: Բուսական և կենդանական աշխարհի սուր դիտողականությամբ ընկալումը, մարդկային կերպարների իրական պատկերումը և նրանց հոգեկան ապրումների համոզիչ վերարտադրումը՝ ուժեղ և հագեցված գունանկարչության հետ, կարդանկարներին տվել են աշխարհիկ ոգու այնպիսի արտահայտություն, որը համահնչուն էր միջնադարի կապանքներից ազատագրվող առաջադեմ հասարակության պատկերացումներին և հոգևոր պահանջներին:

Թորոս Ռոսլինից հետո՝ 1280—1290-ական թվականներից սկսած, երևան է գալիս ձեռագիրը ազատ և շռայլորեն կարդանկարելու հակում: Մանրանկարչության մեջ նկատելի է դրամատիզմը: Կատարյալ ազատություն տալով երևակայությանը, նկարիչները ստեղծում են բարդ, բազմապիսի կոմպոզիցիաներ, որոնք առատորեն տեղադրելով էջերի բաց տարածություններում և նույնիսկ բնագրի մեջ, երբեմն խախտում են ձևավորման հավասարակշռությունը, նրա ազատությունը և ավելի ճոխացնում կարդարանքը:

Ձարդանկարչության մեջ նկատվող այդ նոր հակումները որոշակի արտահայտություն են գտնում 1286 թ. «Ճաշոց»-ի մեջ: Թագավոր Հեթումին նվիրաբերված այդ ձե-

[12] Ձեռագիրը ստացել է Երուսաղեմի Հայոց պատրիարքարանից և նվիրաբերել Մատենադարանին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն 1975 թ.:

ռագիրը աչքի է ընկնում վարդանկարների չափականց մեծ առատությամբ: 400 էջից բաղկացած այս ձեռագրի յուրաքանչյուր թերթի վրա նկարված է 1—3, իսկ ամբողջ գրքում շուրջ 700 վարդանկար: Դրանք մեծ մասամբ բուսական և կենդանական վարդամոտիվներ են լուսանցազարդեր, վարդագիր գլխատառեր, բաժանագարդեր, խորհրդանշաններ՝ մարդկանց, կենդանիների և երևակայական էակների կերպարներով: Առանձնապես ուշագրավ են խորանները, բնագրերի մեջ վետեղված սյուժետային մանրանկարները և ավետարանիչների պատկերները: Այդ ամենը տեղադրված լինելով ձեռագրի տարբեր մասերում, վարդարել են համարյա բոլոր էջերը, ձեռագրին տալով արտակարգ շքեղություն (տախտ. 54—60): Թռչունների, կենդանիների, երևակայական էակների ու մարդկանց ֆիգուրներն այստեղ պատկերված են չափականց շարժուն, դրամատիկական և սուր արտահայտչականությամբ: Նկատվում է ծավալային և տարածական խնդիրների լուծման ձգտում: Զարդանկարների պայծառ ու հնչեղ գույները, որոնք փայլում են ոսկու առատ գործածությամբ, այստեղ , ինչպես և նույն դարի № 9422 ձեռագրում (տախտ. 61—62) և Ակներում Հովհաննես եպիսկոպոսի արտագրած 1287 թ. Ավետարանում, ամբողջ վարդարանքին տալիս են թեթևություն և տոնական տեսք:

Դժբախտաբար օտարերկրյա կավթիչների ներխուժումը Կիլիկիա, և հայկական պետության անկումը 1375 թ. արգելակեցին ազգային գեղարվեստական մշակույթի հետագա բարձր վարգացումը հայրենի երկրի այդ մասում: Սակայն կիլիկյան վարդանկարչության ավանդները անհետ չկորան: Նրանք պահպանվեցին և իրենց արձագանքները գտան հետագա ժամանակների մանրանկարչության մեջ: Ներկա ալբոմը տալիս է մայր Հայաստանում և այլ երկրների մշակութային օջախներում այդ ավանդների կիրառման մի շարք օրինակներ: Այս առումով ուշագրավ են Գլաձորի, Տաթևի, Ղրիմի և այլ վայրերի մանրանկարչական դպրոցների վարդանկարչության հարուստ նմուշները:

XIV դարի հայկական ձեռագրային վարդարվեստի մեծարժեք նմուշների ենք հանդիպում նշանավոր նկարիչներ Մոմիկի, Թորոս Տարոնացու և Գրիգոր Տաթևացու ստեղծագործություններում: Անվանի մանրանկարիչ, քանդակագործ և ճարտարապետ Մոմիկի պատկերավարդած երեք ձեռագրերից մեկի (1292 թ., Նորավանք) վարդանկարները գրավում են դիտողի ուշադրությունը իրենց խոր քնարական և մտերմիկ բնույթով: Դեռևս 1280-ական թվականների սկզբներին Կիլիկիայում հանդես եկած և այնտեղ ստեղծագործած արվեստագետը, վերադառնալով Սյունիք, իր հետ հայրենի երկիր է բերել կիլիկյան վարդարվեստի դեկորատիվ ավանդները, որոնք այստեղ արտահայտվել են հատկապես գլխավարդերում, լուսանցազարդերում, գլխատառերում և մի քանի գույների (կարմիր, կապույտ, կանաչ, դեղին և ոսկեգույն) մեղմ համադրության մեջ: Նկարչի վաղ շրջանի այս վարդանկարներում (տախտ. 63—64) արդեն նկատվում են ոճական այն նախադրյալները, որոնք ավելի կատարյալ տեսքով են երևան գալիս 1302 թ. ձեռագրերի գեղարվեստական կերպավորման մեջ:

Գլաձորի մանրանկարչական դպրոցի ականավոր ներկայացուցիչ Թորոս Տարոնացու 1323 թ. պատկերազարդած ձեռագիրը, ինչպես և նրա մյուս ձեռագրերը, ուշագրավ են ամենից առաջ վարդանկարների առատությամբ և ճոխությամբ (տախտ. 71—72): Այստեղ ևս, ինչպես և Մոմիկի ստեղծագործություններում, սկզբնաէջերի գլխատառերում օգտագործված են ավետարանիչներին խորհրդանշող կենդանիների պատկերներ, որը, անկասկած, կիլիկյան մանրանկարչության ազդեցության հետևանք է: Հատկանշական են լուսանցքների վարդանկարները (ձուկ կուլ տվող թռչունը, ծաղկի ճյուղը կլուցահարող աքաղաղը, սիրենները, սրինգ փչող հովիվը, ծառը բարձրացած պատանին, աղոթող մարդը, վայրի կենդանիները) և կյանքից վերցրած այլ մոտիվները աշխույժ ու գրավիչ են դարձնում ձեռագիրը: Այստեղ կարևոր են նաև ծիածանային կամարը և մանրանկարների բավմատեսակ շրջանակապարդերը: Տաղանդավոր նկարիչը հորինել է նոր վարդաձևեր, միավորելով տարբեր մոտիվներ: Հետաքրքրություն են շարժում բուսական վարդերի մեջ տեղադրված կենդանիները, մարդկային դիմապատկերներ և սյուժետային տեսարաններ ներկայացնող վարդերը:

Թորոս Տարոնացին հարստացրեց հայկական վարդանկարչությունը նոր և ինքնատիպ պատկերներով:

XIII—XIV դարերում Վանա ծովի շրջակայքի վանքերի ու Աղթամարի գրչատներում ստեղծվում են բավմաթիվ ձեռագրեր, որոնց միանգամայն ինքնատիպ վարդարվեստի ավանդները, իրենց անսովոր կայունությամբ, պահպանվում են մինչև XVII—XVIII դարերը:

Վասպուրականի վարդանկարչությանը բնորոշ է դեկորատիվ-գրաֆիկական ոճը: Նա չունի այն փայլը, շքեղությունը և պայծառությունը, ինչ հատուկ է կիլիկյան մանրանկարչությանը: Այս դպրոցի գեղարվեստական վարդարանքը չափականց վուսպ է ու համեստ: Նրա արտահայտչական հիմնական միջոցները համեմատաբար սահմանափակ են: Այստեղ գծանկարն առաջնահերթ և որոշիչ նշանակություն է ստանում: Ներկը կիրառվում է ժլատությամբ, առանց երանգավորման և տեղադրվում է ջրանկարչական եղանակով՝ թեթև, բարակ շերտով ու անխառն: Բացակայում է ոսկին: Հիմնական նյութը թուղթն է, որի մաքուր, չներկված մակերեսը օգտագործվում է որպես հենք վարդանկարում կամ թեմատիկ պատկերի մեջ: Վասպուրականի մանրանկարչական դպրոցի վարպետները կարողանում են գեղարվեստական սեղմ միջոցներով հասնել մեծ արտահայտչականության: Չնայած վարդանկարների հարթապատկերայնությանը, պայմանական գծանկարին և ձևերի որոշ սխեմատիկ լուծմանը, նրանց ստեղծագործությունները կենսալից են: Աշխարհիկ աշխարհաբնությունը տիրապետում է ինչպես սյուժետային մանրանկարների մեջ, նույնպես և վարդանկարներում: Վասպուրականի վարդանկարչության և ընդհանրապես այս դպրոցի մանրանկարչության համար հատկանշական է նաև որոշ պահպանողականությունը: Դա կապված է եղել, ամենից առաջ, տնտեսական-քաղաքական կյանքի այն առանձնահատուկ պայմանների հետ, որի մեջ ապրել է այդ շրջանի հայ բնակչությունը և՝ գեղարվեստական ավանդների այն հարուստ ժառանգության, որը մշակվել էր տեղաբնակների կողմից հնագույն ժամանակներում:

Վասպուրականի վարդանկարչական ոճը, որի արմատները ձգվում են մինչև 1038 թ. ձեռագիրը և ավելի հին դարերը, որոշակի դրսևորվել է մանրանկարիչներ Սիմեոն Արճիշեցու, Կիրակոսի, Ծերունի, անանուն նկարչի (ձեռ. № 9423), Զաքարիայի և Ռստակեսի ստեղծագործություններում:

№ 9423 ձեռագրի (1332 թ.) վարդանկարները (տախտ. 76)՝ լուսանցապարդեր, գլխապարդի առանձին մասեր ու գլխատառեր, լուծված են գրաֆիկական եղանակով: Պարուրաձև վարդանախշը օգտագործվել է գլխապարդերում, իսկ կենդանիների ու թռչունների ֆիգուրներով ձևավորվել են գլխատառերը: Ինքնատիպ են էջերի եզրամասերը ամբողջությամբ պբաղեցնող լուսանցապարդերը, որոնք կապվում են այստեղ հիմնական մոտիվ հանդիսացող արմավենու տերևներից, ինչպես նաև թռչունների, աքաղաղների, ձկների և երևակայական էակների ֆիգուրներից: Զարդանկարների եզրագծերի միջև եղած բաց տարածություններում մի քանի գույների՝ գլխավորապես կարմրի, կապույտի, դեղինի թեթևակի քսվածքը՝ առանց երանգավորման ավելի է ընդգծում ստեղծագործության հարթապատկերային բնույթը: Ամբողջապես հարթապատկերային են խորանները. նրանք զուրկ են ճարտարապետական-կառուցվածքային սկզբունքից: Սակայն այն, ինչն ավելի գրավիչ ու բովանդակալից է դարձնում այդ ձևավորումը, դա գեղարվեստական սեղմ միջոցներով իրական կյանքի սուր զգացողության արտահայտությունն է զարդարվեստի մեջ:

Զաքարիա Աղթամարցու պատկերապարդած բավմաթիվ ձեռագրերից սույն ալբոմում ներկայացված են վարդանկարների նմուշներ միայն 1357 թ. ձեռագրից (№ 5332): Իր ժամանակին (14-րդ դ. երկրորդ կես) լայն ճանաչում գտած արվեստագետը, որը զբաղվել է նաև երաժշտությամբ ու շինարարական գործունեությամբ, գրքի գեղարվեստական ձևավորման ասպարեզում հանդես է եկել համարձակ մտահղացումներով և մի քանի վարդաձևերի նորամուծությամբ: Անվանաթերթում, օրինակ, էջի մի մասում նա տեղադրել է ավետարանիչի պատկերը, մյուսում՝ վերևից ներքև, գլխապարդն ու լուսանցապարդը, գեղեցիկ ու ճաշակով ձևավորելով ամբողջ էջը: Այստեղ մանրամասնորեն պատկերված գլխատառերը, աքաղաղը, սիրամարգը, բավմապան թռչունները՝ ծառերի վրա, խոյակները, շրջանակապարդերը, ոճավորված ծառերը, չորս կամ վեց տերևներով վարդյակները և մյուս վարդերը, որոնցով ձևավորվել են 1357 թ. ձեռագրի 8 խորանները, նրանց հնավանդ ու պարզ կամարները, աչքի են ընկնում հստակությամբ, հարթապատկերային որոշակի գծային ոճով և հյութեղ ու հագեցված գույներով (տախտ. 81—82):

Գրիչ և նկարիչ Ռստակեսի 1397 թ. վարդանկարչական ստեղծագործություններում (տախտ. 83—85), դեկորատիվ-գրաֆիկական ոճը հստակ արտահայտություն է գրտել: Զափազանց արտահայտիչ շարժումը, որը հատուկ է նրա թեմատիկ մանրանկարներին, դրսևորվել է նաև վարդանկարների մեջ: Նրա վարդանկարչական մոտիվները բաւմապան են: Ուշագրավ են հատկապես բաժանապարդերը, որոնք ներկայացնում են բուսական և կենդանական մոտիվների բարդ կոմպոզիցիաներ: Ռստակեսի վարդանկարների կոմպոզիցիաները բավական շարժուն են, ինքնատիպ են և կենսալից:

Ալբոմում զետեղված Վասպուրական աշխարհի մյուս վարդանկարները լրացնում և ամբողջական պատկերացում են տալիս այդ դպրոցի վարդարվեստի ավանդների երկարատև գոյության և առանձին հուշարձանների արվեստի մասին:

XV—XVI դարերում, երբ Հայաստանը կորցրել էր իր պետականությունը և գտնվում էր Թուրքիայի ու Իրանի բռնակալական իշխանության տակ, հայ ժողովրդի ստեղծագործական միտքը թեև կաշկանդվել էր, սակայն շարունակում էր կերտել նոր արժեքներ մշակույթի բնագավառում:

Այս շրջանում գրվում են քանակով բավական շատ ձեռագրեր, որոնց գեղարվեստական վարդարանքի հիմնական տարրերը, սակայն, կազմում են ոչ այնքան թեմատիկ մանրանկարները, որքան խորաններն ու բաժանապարդերը: Ստեղծված լինելով մեծ մասամբ Վասպուրականում (Ոստան, Նարեկավանք, Վան, Սրհու վանք և այլուր), նրանցից շատերը կրում են այդ շրջանում ավանդույթ դարձած գրաֆիկական ոճի կնիքը: Բնորոշ՝ են, օրինակ, 91—94-րդ տախտակների վարդանկարները: Մեկ կամ մի քանի գույներով թեթևակի ներկված այդ վարդամոտիվները չափազանց պարզ են՝ իրենց կառուցվածքով, հստակ՝ անմիջական ընկալման առումով, միօրինակ՝ ոճով ու դեկորատիվ-գրաֆիկական բնույթով: Երեք ձեռագրերից պատճենահանված ավելի քան 400 վարդանկարչական նմուշները (տախտ. 93—100) տալիս են այս նոր շրջանի հայկական վարդարվեստի մասին որոշակի գաղափար:

Հատկանշական են ուշ միջնադարի և նոր ժամանակների շունչն արտահայտող, անցման շրջանի մեծագույն մանրանկարիչ Հակոբ Ջուղայեցու (16—17-րդ դդ.) գունապարդ ստեղծագործությունները (տախտ. 93—96): Նրա կյանքի սկզբնական շրջանն անցավ մայր հայրենիքում, իսկ հաջորդ շրջանը՝ Պարսկաստանում: Նա մեկն էր բավմահազար այն հայերից, որոնք 1604 թվականին, Շահ Աբբասի կազմակերպած բռնագաղթի ժամանակ, քշվեցին դեպի Պարսկաստան և հաստատվեցին Նոր Ջուղայում: Այստեղ էլ Հակոբ Ջուղայեցին հավատարիմ մնաց իր արվեստին: 1610 թ. ձեռագրի նրա վարդանկարներն աչքի են ընկնում գույների մաքրությամբ, պայծառությամբ, հորինվածքների ինքնօրինակությամբ և նորություններով: Բուն հայրենիքից ժառանգված բավմատեսակ վարդամոտիվների մեջ մուտք են գործում նոր՝ արևելյան (գլխավորապես իրանական), վարդանախշեր: Այդպիսիք են տեքստը եզրափակող վարդագծերը, բուսական և թռչնային մոտիվների միահյուսման նոր լուծումները, երկրաչափական նորաձև գլխապարդերը՝ նկարված չափի մեծ զգացումով: Այստեղ նկարիչն օտար ձևերն ընկալել է յուրովի՝ ծառայեցնելով ազգային վարդարվեստի պահանջներին:

Հակոբ Ջուղայեցու վարդարվեստը հագեցված է ջերմ կենսասիրությամբ: Կարևոր դեր է կատարում գույնը, որով հեղինակը հասնում է ոչ միայն բովանդակության, այլև տրամադրության բացահայտմանը: Նրա բավմաթիվ ու բավմերանգ վարդաձևերը, այժմեական գունագեղ մանրանկարների ու ավետարանիչների պատկերների

հետ, արտացոլում են բնության և կյանքի գեղեցկությունները: Այդ մասին է վկայում նաև ձեռագրի հիշատակարանը, որտեղ նկարիչն իր պատկերապարդած ձեռագիրը համարում է «Գարնանային դրախտի նման ծաղկափթիթ այգի» և «վարդերով լեցուն պարտեզ»:

Հակոբ Ջուղայեցին հարստացրեց հայկական ձեռագրային վարդարվեստը՝ արտահայտչական ինքնօրինակ միջոցներով, նոր վարդաձևերով, աշխարհիկ ըմբռնումների պատկերավոր մտածողությամբ, գույների հնչեղությամբ ու կենսուրախ կոլորիտով:

Նոր Ջուղայի դպրոցին են վերաբերվում նաև 1649 թ. Աստվածաշնչի նկարիչ Հերապետի վարդանկարները (տախտ. 99—100):

Ազգային վարդանկարչության ուշագրավ օրինակներ կան հայկական գաղթօջախների ձեռագրերում ևս: Կոստանդնուպոլսի, Լվովի, Կամենեց-Պոդոլսկի և այլ վայրերի գրչատներում ստեղծված ձեռագրային վարդանկարները աչքի են ընկնում բազմօրինակ հորինվածքներով ու անցյալի, հատկապես XIII—XIV դարերի, հայկական վարդանկարչական արվեստի ավանդների պահպանման ձգտումով: Մի քանի վարդանկարներում կատվում է նաև արևմտաեվրոպական փորագրության ազդեցությունը:

Այսպիսով, ավելի քան հազար տարի շարունակ, հայ ժողովրդի տաղանդավոր վարպետների կողմից ստեղծագործաբար մշակված և կատարելագործված ձեռագրային վարդանկարչությունը մինչև այսօր պահպանել է իր հետաքրքրությունը և այժմ էլ ունի գեղագիտական մեծ հրապույր:

Ձեռագրային վարդանկարչությունը հայ ժողովրդի ստեղծագործական հանճարի վառ արտահայտություններից մեկն է: Այստեղ, ավելի քան մշակույթի որևէ այլ բնագավառում, հստակորեն, առատ և աչքառու են դրսևորվել հայ ժողովրդի գեղարվեստական նուրբ ճաշակը, ստեղծագործական մեծ երևակայությունը, մարդուն շրջապատող արտաքին աշխարհի գեղեցկության գեղագիտական ընկալման բարձր կարողությունը և սերը՝ գրքի նկատմամբ: Խորապես բովանդակալից, իրենց բնույթով մարդկային և գեղարվեստական կատարելության հասցված այդ մանր, փոքրածավալ վարդաձևերը բարձրացել են մեծ արվեստի մակարդակին:

Հայ ձեռագրային վարդանկարչությունը խոշոր տեղ է գրավում ոչ միայն ազգային գեղարվեստական մշակույթի մեջ, այլև կարևոր ներդրում է համաշխարհային արվեստի գանձարանում:

Орнаментика армянских средневековых рукописей появилась параллельно с возникновением национального алфавита и письменности. Формируясь постепенно на титульных листах рукописей, на полях страниц в хоранах, сюжетных миниатюрах и их обрамлениях, эти орнаменты стали одним из самобытных разделов армянского изобразительного искусства.

По сей день мы не имеем специального исследования, посвященного орнаментальному искусству армянских рукописей. Однако в отдельных книгах, статьях и альбомах по миниатюре и книжной живописи вообще, изданных в разное время, авторы в той или иной мере обращались к орнаментальному искусству, пытались истолковать смысл этих произведений и их художественное значение.

Научный интерес к армянскому рукописному орнаменту имеет более чем вековую историю. Еще в 1840—50 гг. М. Броссе опубликовал список иллюстрированных рукописей Эчмиадзина[1], вызвавший в то время большой интерес к художественному оформлению армянских рукописей. В 1870—80 гг. о декоративном убранстве рукописей писали археолог А. С. Уваров[2], искусствовед В. В. Стасов[3] и др. Высоко оценивая самобытность армянского орнаментального искусства, В. В. Стасов в своем роскошном альбоме «Славянский и восточный орнамент по рукописям древнего и нового времени» поместил 8 отдельных цветных таблиц, содержащих более 100 образцов армянских орнаментов. Они представляют орнаментику 12 иллюстрированных армянских рукописей, хранящихся в библиотеке венецианских мхитаристов, в хранилищах Парижа, Берлина, Петербурга, Москвы и в частных коллекциях. Он пишет: «В заставках, в заглавных буквах и в украшениях на полях рукописей армянские художники являются людьми, одаренными неиссякаемой фантазией, беспредельною изобретательностью и тонким вкусом как в формах, так и в красках».

В дальнейшем как армянские, так и зарубежные искусствоведы, в том числе Г. Овсепян, И. Стржиговский, Ф. Маклер, А. Свирин и др., обращались к вопросам художественного оформления рукописных и архитектурных памятников, рассматривая их орнаментику, как одну из ветвей всеобщего искусства.

Вопросами происхождения и раскрытия идейного содержания основных мотивов занимался А. Мнацаканян. На основании кропотливого изучения богатого материала он утверждает, что в основе большинства мотивов армянского орнамента лежали конкретные материальные первопричины—природные и социальные силы. Сначала они имели конкретный смысл и практическую значимость, но с течением времени в процессе постепенной переработки отошли от своей материальной основы—первоначального вида, становясь основой новых и разнообразных орнаментальных украшений[4].

---

[1] **Brosset M.**, Catalogue de la bibliotheque d'Etchmiadzin, St. Petersburg, 1840. Того же автора «Rapport sur un voyage archélogique dans la Géorgie et dans l'Arménie, exécuté en 1847—1848", st. Pétersburg, 1851.

[2] **Уваров А. С.**, Эчмиадзинская библиотека, см. «Пятый археологический съезд в Тифлисе», М., 1879.

[3] **Стасов В. В.**, Армянские рукописи и их орнаментации, см. журнал «Народное просвещение», 1885. Того же автора; «Славянский и восточный орнамент по рукописям древнего и нового времени, Атлас. СПб, 1887.

[4] **Мнацаканян А. Ш.**, «Армянское орнаментальное искусство», (автореферат), Тбилиси, 1963.

Многочисленные образцы армянской орнаментики с краткими толкованиями находим в книге Л. А. Дурново «Краткая история древнеармянской живописи»[5], в составленном ею объемистом альбоме «Древнеармянская миниатюра»[6] и в его переизданиях[7], в предисловии альбома «Армянская миниатюра», изданном в Венеции в 1966 г.[8], в трудах С. Тер-Нерсесяна[9], а также в отдельных трудах и статьях, посвященных разным школам армянской миниатюры[10].

Настоящий альбом—первая попытка представить отдельным томом избранные образцы орнаментов, скопированных из средневековых рукописей, хранящихся в Матенадаране. Работа эта была начата еще в 1946 г. Она была задумана и осуществлена под руководством искусствоведа, заслуженного деятеля искусств Армянской ССР—Лидии Александровны Дурново (1885—1963). Однако смерть помешала издать альбом с предисловием, дополнениями и комментариями Дурново. Поэтому руководство Государственной картинной галереи Армении и Матенадарана решило совместно издать настоящий альбом.

В процессе подготовки к изданию из 83 первоначально составленных таблиц 2 были исключены из-за невысокого качества копирования. Одновременно нашли целесообразным выбрать и поместить в альбоме 15 таблиц из архивных фондов Гос. картинной галереи Армении, которые в свое время были скопированы художниками-специалистами под руководством Л. А. Дурново. Кроме того, он дополнен еще четырьмя новыми таблицами, (табл. 28, 45, 46, 51), составленными по выбору лиц, осуществляющих данное издание.

Таким образом, в альбоме помещено 100 цветных таблиц, содержащих более 2000 образцов, размещенных в хронологическом порядке.

Представляемым материалом, разумеется, не исчерпываются лучшие образцы орнаментального искусства, созданные на протяжении веков талантливыми сынами армянского народа. Они являются лишь наиболее важными, типичными и часто используемыми образцами национальных орнаментальных украшений.

***

Зарождение и формирование основных мотивов армянского орнаментального искусства своими корнями уходит в глубокую древность. В начальной стадии в нем преобладали геометрические, растительные, животные, а также другие мотивы (небесные тела, архитектурные строения и др.), столь характерные для орнаментальной культуры других народов, особенно для коренного населения Древнего Востока.

Христианство, которое сначала боролось против культурного наследия языческих времен, в дальнейшем постепенно, как в других странах, так и в Армении, отступило и обратилось к применению древних украшений. Благодаря этому культовые сооружения, священные сосуды, занавеси, одеяния священнослужителей, посохи и другие предметы, а также рукописи, в частности Евангелие, Библия, Служебник, Требник и др., начали украшаться старинными орнаментальными узорами и их переработанными новыми формами. Здесь значительную роль играли краски и их оттенки; работа выполнялась пером и кистью, поэтому эти украшения приобретали многообразный и привлекательный вид, формируя еще одну новую область армянского орнаментального искусства, которую мы называем рукописной орнаментикой.

Армянская рукописная орнаментика, как и другие отрасли средневекового искусства, проходя через этапы развития, использовала стилистические особенности различных школ.

К сожалению, орнаментальные произведения V—IX вв. не дошли до нас, а сохранившиеся отдельные образцы (табл. 1) не дают полного представления об искусстве оформления книг того времени. Однако высокий уровень сюжетных миниатюр и орнамента, дошедших до нас с X в., свидетельства письменных источников говорят о том, что в предшествующие века были разработаны определенные традиции художественного оформления и иллюстрирования армянских рукописей.

С этой точки зрения примечательны примерно 80 образцов, скопированных из трех рукописей X в. (табл. 2—6). При общности мотивов убранств и структуры с декоративным искусством Ближнего Востока они в то же время отличаются своей самобытностью.

Благодаря освобождению армянского народа из-под ига арабов и восстановлению собственной государственности, в стране создались благоприятные условия для развития национальной культуры армян. Из рукописных памятников, созданных в новых условиях, исключительную художественную ценность своими орнаментами представляет уни-

[5] **Дурново Л. А.**, Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957.

[6] **«Древнеармянская миниатюра»**, альбом, предисловие **Л. А. Дурново** (на арм. и русск. яз.), Ереван, 1952.

[7] „Miniature Arménienne", Texte et note de **L. A. Durnovo**, préface de S. Der-Nersessian, Paris, 1961, **«Армянская миниатюра»**, альбом, предисловие **Л. А. Дурново**, Ереван, 1967.

[8] **«Армянская миниатюра»**, альбом, предисловие **О. С. Чанашяна** (на арм. яз.), Венеция, 1966.

[9] **Тер-Нерсесян С.**, Армянское искусство в средние века (на арм. яз.), Ереван, 1975.

[10] **Л. Азарян**, Киликийская миниатюра XII—XIII вв., Ереван, 1964; **А. Аветисян**, Гладзорская школа армянской миниатюры, Ереван, 1975; **Т. Измайлова**, Армянское иллюстрированное четверо евангелие, 1018 г., см. сборник статей «Армянское искусство», изд. АН Арм. ССР, т. I, Ер., 1974, стр. 74—81; **Г. Акопян**, Миниатюра Васпуракана, кн. I, Ер., 1976; **И. Дрампян, Э. Корхмазян**, Художественные сокровища Матенадарана, М., 1976.

кальная рукопись 989 г. («Эчмиадзинское Евангелие»). Эти орнаменты и сегодня сохраняют яркость немеркнущих красок (табл. 4—5). На них изображены хораны с колоннами, арками, капителями и базами, деревья, корзины с фруктами, цветы, с гранатовыми ветками, птицы (голуби, павлины, перепелки, куропатки), занавеси, подушки, радужные арки и др. Привлекают внимание и узоры обрамления сюжетных миниатюр. В них талантливый армянский миниатюрист мастерски передает сходство и даже материальные свойства изображаемого—мраморных колонн, ионических капителей и радужных арок наподобие арок парадных входов монументальных зданий. Особенно жизненно и убедительно изображены птицы и растительность. Мастерство художника, его изящный вкус проявляется, в частности, в тональности. Богатая палитра красок, сопоставление оттенков светлых и теплых тонов (яркокрасного, коричневого, зеленого и синего) при весьма умеренном применении золота создают жизнерадостное настроение и вместе с другими миниатюрами евангелического цикла придают всей рукописи в целом торжественность, праздничность и пышность. Эти высокохудожественные и монументальные орнаменты, созданные в конце X в., в период царствования анийских Багратидов, созвучны расцвету культуры того времени, духу поэзии Григора Нарекаци. Они говорят также о живучести традиций, идущих с эллинистических времен. Своеобразием и национальным характером орнаменты 989 г. занимают заметное место не только в армянской, но и во всеобщей сокровищнице искусств.

В альбоме широко представлены орнаменты XI в. (табл. 7—26). В рукописной орнаментике и в сюжетных миниатюрах этого периода, созданных в различных очагах национальной культуры, четко выделяются два стиля художественного оформления рукописей—графический и живописный.

К числу произведений графического стиля принадлежат орнаменты рукописей 1018, 1038 и 1057 гг. Подчеркнутость контурных линий, плоскостность, отсутствие архитектурного пейзажа и золота, широкая обобщенность форм, ограниченность применения красок и лаконизм являются основными особенностями орнаментики этой группы. Художник 1018 г. обобщенно изображал виноградные и пальмовые листья, миндалевидные пальметки, основания колонн, состоящие из поставленных друг на друга и окрашенных в различные цвета отдельных плит с подчеркнутыми контурами, отказываясь полностью от архитектурных подробностей, применяемых в прошлом (табл. 8—10). Особый интерес представляют также переплетенные цепочки, нарисованные несмешанными красками—белой, зеленой, красной и желтой—на черном фоне. Чрезвычайно сдержанный и лаконичный рисунок, которому подчинены краски в этой, а также рукописях 1038 и 1057 гг., играет определяющую роль в раскрытии содержания. Эти орнаменты монументального стиля имеют своеобразный колорит, отличающий их от других.

Характерными образцами живописного стиля XI в. являются орнаменты рукописей №№ 7736, 2805, 7737 и 2877 (табл. 11—26). О рукописи № 7736 («Евангелие Мугни») Л. А. Дурново писала: «В смысле богатства орнамента, подбора контрастных, но мягких тонов в сочетании с золотом и серебром (теперь потемневшим), разнообразия дополнительных изображений в виде птиц, животных, растительности, их размещения живопись Евангелия Мугни является по изобразительной и красочной пышности и насыщенности памятником высокохудожественных достижений»[11].

Действительно, здесь (табл. 18—21) достигнута чрезвычайная тонкость рисунка, тщательная обработка деталей украшений и насыщенность красок. Крупные, занимающие всю страницу тяжеловатые прямоугольные хораны, а также нововведенные заставки насыщены растительными, животными и геометрическими мотивами, придающими всей рукописи пышность и красочность.

Изображенные густыми красками, эти произведения монументального стиля приближаются к фресковой живописи. Обладая большим художественно-декоративным даром, армянский мастер разместил свои компактные композиции, не нарушая равновесия убранства страницы. Богатством украшений, большой творческой фантазией, четким живописным решением мотивов отделки орнаментов «Евангелие Мугни» перекликаются с орнаментальной живописью рукописей царицы Млке 902 г. и Эчмиадзина 989 г.

Таблицы 27—45 представляют орнаменты коренной Армении и зарубежных очагов XII—XIII вв. В них отобраны более чем 500 образцов, созданных в разных местах. Своей оригинальностью и стилистическими особенностями особо выделяются орнаменты художников Степаноса (табл. 29—32), Козьмы (табл. 33—35), рукописи безымянного художника 1224 г. (табл. 36—37), Тороса (табл. 38), Игнатиоса (табл. 39—40), Григора (табл. 41—44). Армянская книжная орнаментика достигла своего высокого развития в XII—XIII вв. в Киликийской Армении.

После падения царства Багратидов (1045 г.), в период нашествий турок-сельджуков, а затем монгольских племен и во время их длительного господства в Армении значительная масса армян переселяется на северо-восточный берег Средиземного моря — в Киликию, образуя здесь новое, Киликийское царство, просуществовавшее около 200 лет (1198—1375 гг.).

---

[11] Дурново Л. А. Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957 г., стр. 23.

Создавшиеся здесь благоприятные условия экономической и политической жизни, развитая транзитная торговля и широкие международные связи способствовали процветанию армянской национальной культуры, в частности, миниатюры и занимающего в ней исключительное место книжного орнаментального искусства. В начальной стадии оно носило определенную печать книжного искусства коренной Армении. Со второй половины XII в. в соответствии с новыми жизненными условиями и художественными потребностями народа уже формируются стилистические особенности киликийской школы миниатюры. Размеры рукописных книг уменьшаются, вместе с этим более мелкими и утонченными становятся орнаменты и обработка их деталей. Теряет свое значение монументальный стиль, свойственный орнаментике коренной Армении, предпочтение отдается декоративному убранству рукописей. Совершенствуется гармония узоров в оформлении титульных листов. Если до этого в Армении орнаментика применялась главным образом в оформлении лицевых листов и обрамлениях сюжетных миниатюр, то здесь, в Киликии, обильно украшаются и другие страницы рукописей. Краски становятся более яркими, светлыми и звучными, широко применяется золото. В сюжетных миниатюрах, как и в орнаментике, усиливается стремление к отражению реальной жизни. Религиозные—евангельские—сюжеты и символика начинают приобретать светский вид. Благодаря творческому общению с культурой соседних и далеких стран, в орнаментальное искусство вносятся новые мотивы.

Эти новые тенденции, которые стали заметны в иллюстрациях книги Григора Нарекаци «Книга скорбных песнопений» 1173 г., затем в украшениях рукописей 1194, 1237 и 1249 гг., полнее проявляются в скопированной (по свидетельству писца) «из хорошего и отборного образца» рукописи 1251 г. (табл. 4). В изображенных мастером Вартаном с ювелирной кропотливостью и обильным применением золота в декоративных хоранах, в точной передаче подробностей фигур птиц, четкой композиции растительных мотивов, их гармоничном размещении и в совершенной технике уже выражается новый стиль в орнаментальном искусстве.

Высокая техника и богатство убранств киликийской школы миниатюры наиболее ярко выражены в орнаментах маленькой рукописи (23×15,5 см), исполненной по заказу Смбата Спарапета (табл. 48—50).

Четырехугольные, трехколонные, легкие, золоченные хораны, представляющие новое качество в оформлении лицевых страниц, отличаются от орнаментов предыдущего периода своими формами, разнообразием мотивов (русалки, дикие звери, фантастические существа, кони и др.), равномерностью размещения рисунков птиц и деревьев, а также разукрашенностью заглавных букв и узорами обрамления.

В 1260—70 гг. в Киликии выступает ряд новых, высокоодаренных миниатюристов, поднявших армянское рукописное орнаментальное искусство на новый, более высокий уровень.

Знаменитым, широко признанным художником этого времени был Торос Рослин. Им было оформлено и иллюстрировано множество рукописей, из которых, однако, нам известны всего 7, созданные в 1256—1268 гг. В Матенадаране им. Маштоца хранятся 2 рукописи этого гениального миниатюриста. Образцы орнаментов одной из них—№ 10675 (1268 г.)[12] помещены в данном альбоме (табл. 51). Они образуют сложные композиции, составленные из растительных, животных, геометрических мотивов, человеческих и фантастических фигур, украшающие главным образом хораны и титульные листы. Здесь Торос Рослин выступает как большой мастер композиции. Умело размещая задуманный орнамент, гармонично и равномерно организуя страницы, художник насыщает свои композиции глубоким ощущением реальной жизни. Это явление, проявившееся в рукописной орнаментике,— следствие того нового мироощущения, которым был проникнут народ Киликии, переживающий материальный и духовный расцвет во второй половине XIII в.

